

ՈՂՆԱՀԱՐԱՎՈՐ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՔՍՈՆՈՄԻԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԿԵՆՂԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ.Ջ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ,
377201, Վանաձոր

Հոդվածում մի շարք օրինակներով ցույց է տրված կենդանիների հայերեն անվանումների խառնաշփոթ վիճակը (երբ տարբեր կենդանիների տրվում է միևնույն անվանումը, կամ միևնույն կենդանուն տարբեր անվանումներ), կամային, չհիմնավորված, երբեմն անհեթեթ թարգմանություններ, հակասություններ միևնույն կենդանու լատիներեն անվանումների մեջ, տաքսոնոմիական միավորումների անվանումների միասնական սկզբունքի բացակայություն և այլն: Հաշվի առնելով այս վիճակը, հիմնավորված է հայերեն լեզվով գիտականորեն ճիշտ կազմված կենդանաբանական բառարանի անհրաժեշտությունը:

В статье на ряде примеров показана путаница, существующая в зоологических терминах (когда различным животным даются одинаковые названия, или же одному и тому же животному - разные), произвольный, необоснованный, иногда даже несуразный перевод с русского или латинского языков, противоречия в латинских названиях одного и того же животного, отсутствие единого принципа наименования таксономических категорий и т. д. Исходя из этого, показана необходимость создания научно-обоснованного зоологического словаря на армянском языке.

The analysis of contemporary situation of taxonomic names of vertebrates is given. The chaotic state of Armenian names of the animals is illustrated with some examples as different animals are given the same name or the same animal is named differently. There are false translations from Latin, incompatible names of the animals even in Latin and no common principles are observed. Taking into account such a situation the necessity of creation of scientifically collated Zoological Dictionary arises.

Ողնաշարավորներ - տաքսոնոմիական անվանումներ - կենդանաբանական բառարան

Կենդանիների անվանումների վերաբերյալ չունենք մի այնպիսի ընդհանրացված գրականության աղբյուր (բառարան, որոշիչ կամ դասագիրք), որտեղ ի մի բերվեին, միատեսակ դարձվեին ու կայունացվեին մայրենի լեզվով կենդանիների անվանումները, և որից կարողանային օգտվել ուսուցիչները, աշակերտները, ուսանողները, բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսները, թարգմանիչները, և միաժամանակ այն հանդիսանար կենդանիներին ճիշտ անվանելու և ճանաչելու հիմնական ուղեցույց: Հավանաբար, դա է պատճառը, որ հաճախ դասագրքերում, ակնարկներում, գիտական և լրագրային հոդվածներում, նույնիսկ բառարաններում տարբեր կենդանիներին տրվում է միևնույն անվանումը կամ միևնույն կենդանուն տարբեր անվանումներ: Օրինակ, հայ-ռուսերեն բառարանում [8] *այծյամը* թարգմանված է *серна*, *косуля*, իսկ *եղնիկը* *лань*, *серна*, *бայр* *сойка*, *чайка*: Ռուս-հայերեն բառարանում [14] *косуля*-ն թարգմանված է *այծյամ*, իսկ *серна*-ն՝ *քարայծ* կամ *լեռնայծ*: Ըստ Մանյանի [1] *այծյամը* և *եղնիկը* միևնույն կենդանիներն են: Ղարիբյանի բառարանում [10] գրված է՝ *олен* - եղջերու (արու), *եղնիկ* (եգ): Մինչդեռ եղջերու տեսակ չկա: Կա *եղջերայինների ընտանիք*, որի մեջ մտնում են եղնիկը, *այծյամը*, *քարայծը* և մյուսները, որոնք բոլորն էլ եղջերուներ են լայն իմաստով: Նույն բառարանում տրված է, որ *чайка*-ն *որորն* է կամ *бայր*: Իրականում *бայр* *сойка*-ն է, իսկ որորը *чайка*-ն: Այս թռչունները տարբեր կարգերի ներկայացուցիչներ են և ունեն տարբեր կենսակերպ, *бայր* անտառային թռչուն է, որորը՝ ջրային:

Անորոշություն է նկատվում նաև կատվայինների անվանումների մեջ: Օրինակ *палтара*

անունը ընդունվել է որպես տեսակի անվանում և թարգմանվել *հովազ*, *հովազառյուծ* [7, 13, 14], ճարճ-ը թարգմանված է *հովազ*, *ինձ* [9, 10, 12, 14]: Մեկ այլ գրականության մեջ [9, 11] леопард-ն է (*Panthera pardus*) թարգմանված *հովազ*, *ընծառյուծ*, *ինձ*: Սև գույն ունեցող նրա ծագին անվանել են *պանթերա*, *հովազառյուծ* [11]: Կենդանաբանության դպրոցական դասագրքում [13] որպես առանձին տեսակներ են տրված ընծառյուծի երկու թույրերը: Նրանց անվանել են *սև հովազ* և *ընծառյուծ*: Սակայն դրանք ինքնուրույն տեսակներ չեն: Վառ գունավորում ունեցող ընծառյուծից երբեմն ծնվում է սև գույնի ծագ՝ մելանիստ: Խոսակցական լեզվում նրան անվանում են черная пантера՝ սև կատի ունենալով, որ պատկանում է *Panthera* ցեղին:

Գրականության մեջ կան նաև այլ տեսակի արծատացած կապակցություններ, որոնք նույնպես պահանջում են ճշտում: Երբեմն կենդանու անվանում են այդ նույն տեսակի արուի անունով: Օրինակ վայրի խոզն անվանում են նաև *վարազ* [5, 7, 11], այնինչ՝ վարազը արու խոզն է (եզը կոչվում է *մերում*): Զետևաբար, շփոթությունից խուսափելու համար ճիշտ կլինի *վարազ* անվանել միայն արու խոզին: Նույն ձևով тигр-ին, որը հայերեն պետք է նույնպես տուր կոչվի, անվանում են *վայրի ցուլ*, այն դեպքում, երբ ցուլը տավարի արուն է, իսկ եզը *կովն* է, կամ էլ տուրին վայրի եզ են անվանում, մինչդեռ *եզը* ամորձատված արուն է [9]:

Տարբեր ձեռնարկներում հակասություններ են նկատվում նաև լատիներեն անվանումներում: Միևնույն կենդանու տրված են տարբեր լատիներեն անվանումներ: Այսպես «Зоология позвоночных» դասագրքում [16] бенгаль-ը տրված է որպես *Bos bengalensis*: Նույն գրքի հայերեն տարբերակում՝ [12] *Bibos bengalensis*, իսկ «Жизнь животных, 1989» հանրագիտարանում այդ տեսակը լատիներեն կոչվում է *Bos javanicus*:

Նման օրինակներ կարելի է բերել կենդանիների բոլոր կարգաբանական խմբերից:

Անճշտություններ ու հակասություններ կան կենդանիների կարգաբանական տերմիններում: Օրինակ, Նաունովի դասագրքում [12] գիշատիչ բջջունների կարգը բաժանված է «բազենների» և «արծիվների» ընտանիքների: Այնինչ՝ արծիվների ընտանիք գոյություն չունի, համընդհանուր ճանաչում ունի *ճուռակայինների ընտանիքը*, որի մեջ է ընդգրկվում նաև *արծիվների ցեղը*: Խառնաշփոթություն կա բազենների, ճուռակների, արծիվների անվանումներում: Բազենների որոշ տեսակներին անվանում են *ճուռակ* կամ ընդհակառակը, ճուռակին *բազե*: Անշուշտ, մեծա իրավիճակը բարդություն է ստեղծում կենդանիների ճիշտ ճանաչելու, դպրոցներում և բուհերում կենդանաբանությունն առավել արդյունավետ ուսուցանելու գործում:

Նկատի ունենալով տիրող իրավիճակը և կենդանաբանական համապատասխան տեղեկատու բառարանի բացակայությունը, կազմվում է «Հայերեն-ռուսերեն-լատիներեն կենդանաբանական հանրագիտական բառարան» (ողնաշարավորներ)՝ համաձայն դպրոցների և բուհերի կենդանաբանության դասընթացների պետական ծրագրերի պահանջների և ուսուցման բնագավառում կատարվող ռեֆորմի: Նրանում ի մի են բերվել դպրոցների, ինստիտուտների կենդանաբանության դասագրքերում եղած, ինչպես նաև հայերենի բնաշխարհում և որոշ երկրներում առավել տարածված, հաճախ հանդիպող շուրջ 2000 տեսակ կենդանիների եռալեզու անվանումները: Միաժամանակ յուրաքանչյուր կենդանու մասին տրվել են տեղեկություններ կարգաբանության մեջ նրա զբաղեցրած տեղի, արտաքին տեսքի, վարքի, բազմացման ու զարգացման առանձնահատկությունների, տարածման վերաբերյալ: Զնաթվորության սահմաններում բառարանում տրված են միևնույն կենդանու և զրական, և՛ ժողովրդի մեջ առավել տարածված բարբառային անվանումները, օրինակ *գորշուկ սովորական* (կոռաբաշ, փորսուղ, իշղար, ջքառուկ): Հայերեն անվանում չունենալու դեպքում մի շարք կենդանիների տրվել է ռուսերեն կամ լատիներեն անվանումը՝ թարգմանաբար: Օրինակ, բուրդաբերաններից мысина կենդանու անվանել ենք *լորձուն*, որն ունի որոշակի իմաստ և կենդանու մասին պատկերացում է տալիս:

Բառարանը կազմելիս անհրաժեշտություն զգացվեց ճշգրտել և ընդհանուր հայտարարի բերել կենդանիների կարգաբանական անվանումների վերջածանցները: Օրինակ, մի դեպքում գրվում է «սաղմոնանմանների կարգ», «հավազգիների կարգ», «ճնճուկկազգիների կարգ» [9, 12], մի այլ դեպքում՝ «շնագզիների ընտանիք», «կատվազգիների ընտանիք» [9, 12, 13] և այլն: Ավելի հարմար է ինչպես ընդունված է ռուսերենում -ообразные, լատիներենում -formes, հայերենում ևս կարգի անվանման վերջածանցը լինի ոչ թե -ազգիներ կամ -մաններ, այլ -կերպեր: Նկատի ունենալով տվյալ հանգամանքը, բառարանում «հավազգիների կարգը» վերանվանվել է «հավակերպերի կարգ», «ճնճուկկազգիների կարգը»՝ «ճնճուկկակերպերի կարգ» և այլն:

Եթե կարգի անվանումը կապված է կենդանու որևէ օրգանի հետ (կնճիթ, կզղակ, սմբակ),

այս դեպքում *-կերպի* փոխարեն ավելացվել է *-ավոր* վերջածանցը, օրինակ կնճիթավորներ, սմբակավորներ, երկարաթևավորներ և այլն: Եթե կարգի կամ ընտանիքի անվանումը արտահայտում է կենդանու որևէ հատկանիշ, օրինակ՝ գիշատիչ, կրծող, կռռան, ապա այս դեպքում, նրանք տրվել են հոգնակի թվով՝ գիշատիչներ, կրծողներ, կռռաններ:

Միատեսակ ենք դարձրել նաև ընտանիքների անվանումների վերջածանցները՝ դրանք համաձայնեցնելով ռուսերենում և լատիներենում ընդունված վերջածանցներին՝ *-овые*, *-евые* և *-idae*, որոնց հայերենում համապատասխանում է *-ային* վերջածանցը: Այսպես՝ «շնագզիների ընտանիքը» վերանվանվել է «շնայինների ընտանիք», «կատվագզիների ընտանիքը» «կատվայինների ընտանիք», «բաղերի ընտանիքը»՝ «բաղայինների ընտանիք» և այլն: Եթե ընտանիքի անվանումը բաղկացած է երկու բառից և 2-րդ բառը ցույց է տալիս որևէ հատկանիշ, ապա ոչ մի վերջածանց չի ավելացվել, այլ միայն զրվել է հոգնակի թվով: Օրինակ ընտանիք *անձրուկներ լուսատու* (բայց ընտանիք *անձրուկայիններ*), *օձածկներ էլեկտրական* (բայց ընտանիք *օձածկնայիններ*) և այլն [3]:

Կենդանիների վերնակարգերի, ցեղերի անվանումները տրված են հոգնակի թվով, ենթակարգերինը՝ *-նմաններ* վերջածանցով (ինչպես ռուսերենում՝ *-образные*, լատիներենում՝ *-oides*): Թռչունների դասակարգման վերաբերյալ աշխատություններում ցեղը տրված է եզակի թվով: Սակայն, քանի որ ցեղը ընդգրկում է մի խումբ կենդանիներ, ճիշտ ենք համարում այս կարգաբանական միավորը նույնպես տալ հոգնակի թվով:

Որոշակի սկզբունք է մտցվել այն դեպքերի համար, երբ անվանման մեջ նշվում է կենդանու ապրելու էկոլոգիական կամ աշխարհագրական վայրը: Այսպես եթե կենդանին ապրում է գետում կամ լճում, ապա անվան ապրելու վայրը ցույց տվող բաղադրիչը դրվում է սեռական հոլովով (մի շարք դեպքերում այդպես է ընդունված ավանդաբար). օրինակ՝ Նեղոսի կոկորդիլոս, Գանգեսի գավաի, Ամուրի կարմրաձուկ, Չուկի սիգ, Սևանի սիգ և այլն:

Եթե կենդանին ապրում է ծովում կամ օվկիանոսում, ապա ապրելու վայրը նշող բաղադրիչին ավելացվում է *-յան* ածանցը (սևծովյան, կասպյան, արալյան, կարիբյան և այլն):

Այն դեպքերում, երբ կենդանիների անվանումների մեջ նշվում է ազգություն արտահայտող կամ էթնիկ բնակչություն ունեցող երկրի անունը, ապա այդ անվան արմատին ավելացվում է *-ական* (հայկական, թուրքմենական, հնդկական, նորգելանդական և այլն), մյուս դեպքերում՝ *-յան* ածանցը (սիբիրյան, դաղստանյան, դրինյան, աֆրիկյան, մոզամբիկյան և այլն) [4]:

Դասագրքերում ու ձեռնարկներում նշված են *զույգ*-, *երկ*-, *կենտ*-, *անզույգ*, *անզուգամատ*, *զուգամատ սմբակավորների* կարգեր [7, 9, 11, 12, 13]: Քանի որ հայերենում ունենք «կճղակ» բառը, ապա նման խառնաշփոթ անվանումներից խուսափելու և մայրենին պահպանելու նպատակով կիրառել ենք *կճղակավորների կարգ* (*отряд парнокопытные*) և *սմբակավորների կարգ* (*отряд непарнокопытные*) անվանումները:

Կարիք զգացվեց նաև բազմաթիվ ողնաշարավոր կենդանիների անվանումներ ճշգրտել, շտկել, անհրաժեշտության դեպքում համաձայնեցնել լատիներենին կամ բառարմատի ծագման հետ և ապա ճիշտ անվանել: Այսպես, օրինակ *առտ* ձուկը հայերեն թարգմանված է *շիպ*, *իշածուկ*. *костяшка*-ն նույնպես թարգմանված է *իշածուկ* (մինչդեռ այս ձկները պատկանում են տարբեր կարգերի): Պարզելով «*առտ*» բառի իմաստը՝ ձուկը անվանել ենք *իշադունչ* [2]: Մեկ օրինակ *сипуха* թռչունը հայերեն թարգմանված է հավապատիր [9], սիպուխա, բվեն [7] (բվեն է թարգմանված նաև *флтих*-ը [7, 12]): Սակայն այս թռչունը իր ռուսերեն անվանումը ստացել է խռպոտ, թշնամող ծայրեր արծակելու շնորհիվ (*сипуха* - խզխզան, խռպոտ): Այդ պատճառով ճիշտ ենք համարում այս թռչունն անվանել *խզխզան* բու:

Մի շարք դեպքերում տարբեր հեղինակներ միևնույն կենդանու թարգմանաբար տալիս են զանազան չհիմնավորված անվանումներ: Այսպես, օրինակ *каймановая черепаха*-ն թարգմանված է *կայմանային*, *կայմանյան*, *կայմանավոր*, *Կայմանովի կրիա* [7, 9, 12]: «*Кайман*» բառի ստուգաբանությունը ցույց տվեց, որ կենդանու հայերեն՝ ճիշտ անվանումը պետք է լինի *կայման կրիա* [5]:

Կենդանիներին նկարագրող տեքստերում տրված են նրանց հայերեն, ռուսերեն կամ լատիներեն անվանումների ստուգաբանությունները: Այնուհանդերձ, որոշ անվանումների ծագումը չհաջողվեց պարզել, քանի որ դրանց սկզբնաղբյուրները տանում են դեպի դարերի խորքը և անհնարին են դարձնում անվան բացահայտումը:

Ճշգրտվել և ընդհանուր հայտարարի են բերվել կարգաբանական տերմինները, որոնք

չէին համապատասխանում ժամանակակից կարգաբանությանը: Որպես կարգաբանության հիմք ընդունվել է «Жизнь животных» բազմահատոր հրատարակության մեջ տրված դասակարգումը: Դա բացատրվում է նրանով, որ նույնիսկ նորագույն դասագրքերում և մասնագիտական կարգաբանական աշխատություններում տրված են տարբեր դասակարգումներ: Նկատի ունենալով, որ «Жизнь животных» աշխատությունը գրվել է առաջատար կենդանաբանների կողմից, նպատակահարմար գտանք այդտեղ տրված դասակարգումը ընդունել և օգտագործել տվյալ հանրագիտարանում: Թե՛ղունների բաժինը տրված է ըստ Ստեփանյանի դասակարգման [17]:

Այսպիսով, հայերեն լեզվով ռոմաշարավոր կենդանիների բառարան-հանրագիտարանի առկայությունը որպես գիտական և իմացական աշխատություն կլրացնի կենդանաբանական տերմինոլոգիայում և գրականության մեջ մինչև այժմ տեղ գտած լեզվական բացը, վերջ կտա կամայական թարգմանություններին, կենդանիների անվանումների աղավաղումներին և, անշուշտ, կնպաստի կենդանաբանական դասագրքերի վերանայելուն և առաջիկայում հրատարակվելիք դասագրքերում առավել պարզություն մտցնելուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Անանյան Վ.* Հայաստանի կենդանական աշխարհը, 2, Երևան, 1962:
2. *Գրիգորյան Դ.Ջ.* Կենդանիների հայերեն ճիշտ անվանումներ տալու կարևորությունը, Հայաստանի կենսաբանական հանդես, 54, 3-4, 2002:
3. *Գրիգորյան Դ.Ջ.* Կենդանիների կարգաբանական անվանումների համակարգման անհրաժեշտությունը հայերենում, ՀԳԱԱ Ձեկույցներ, 102, 4, 2002:
4. *Գրիգորյան Դ.Ջ.* Կենդանիների ապրելու վայրը ցույց տվող հայերեն անվանումների ճիշտ կազմությունը, ՀԳԱԱ, Ձեկույցներ, 102, 5, 2003:
5. *Գրիգորյան Դ.Ջ.* «Կայման» (Caiman) կենդանաբանական տերմինի ստուգաբանությունը և զործածությունը թարգմանությունների մեջ, Հայաստանի կենսաբանական հանդես, 54, 3-4, 2002:
6. *Ջաքարյան Խ.Ա.* Ռոմաշարավորների կենդանաբանություն (ռուս. ծեռնարկ), Երևան, 1979:
7. *Համբարյան Ա.Ե.* Ռոմաշարավորների կենդանաբանություն, 3, 4, IV, Երևան, 1999-2002:
8. Հայ-ռուսերեն բառարան, Երևան, 1960:
9. *Ղազարյան Ռ.Ա.* Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան, գիրք Ա, Երևան, 1998, գիրք Բ, Երևան, 1992:
10. *Ղարիբյան Ա.Ա.* Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1982:
11. *Մարտիրոսյան Վ.Ա., Պապանյան Ա.Բ.* Հայաստանի վայրի կաթնասունները, Երևան, 1983:
12. *Նաումով Ա.Պ.* Ռոմաշարավորների կենդանաբանություն, պրակ I, Երևան, 1956, պրակ II, Երևան, 1958, (թարգ. ռուս.):
13. *Ջիվանյան Կ.Ա., Դանիելյան Ֆ.Դ., Ռուխկյան Ռ.Դ., Յավրույան Է.Գ.* Կենդանաբանություն: Կենդանիներ (դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դաս. համար), Երևան, 2000:
14. Ռուս-հայերեն բառարան (չորս հատորով), Երևան, 1954-1956:
15. Животный мир Белоруссии. Рыбы. Энциклопедический справочник, Минск, 1989.
16. *Наумов С.П.* Зоология позвоночных, М., 1973.
17. *Степанян Л.С.* Конспект орнитологической фауны СССР, М., 1990.

Поступила 12.1.2003